Շրջակա միջավայրի վրա ազդեցության Գնահատման հաշվետվություն

Արմավիրի մարզ, Մեծամոր համայնքի 2-րդ թաղամաս 1/2 հասցեում նախատեսվող բնակելի համալիրի

Պատվիրատու՝

<<ՀԱԷԿ-ի շինարարություն>> ՓԲԸ

Կատարող

<<Էկո գրուպ ԱՄ>> ՍՊԸ

Երևան 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 3
Ձեռնարկողի մասին տեղեկություն 3
1.1 Հապավումներ 3
1.2 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը 4
1.3 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ) 7
1.3.1 Նախատեսվող գործունեության նկարագիր 7
1.3.2 Նախատեսվող աշխատանքների կազմակերպում 11
1.3.3 Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ 11
1.3.4 Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ 12
1.3.5 Կադրային ապահովում և շինտեխնիկա 16
1.3.6 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում 17
2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ 19
2.1 ՖԻԶԻԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 19
2.2 ԿԼԻՄԱՆ 24
2.3 Օդային ավազան 27
2.4 Ջրային ռեսուրսներ 28
2.5 Հողերի նկարագիրը 28
2.6 Հիմնային աշխատանքներ 29
2.7 Բուսական և կենդանական աշխարհ 30
2.8 Թափոնների կառավարում 32
3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ 33
3.1 ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ 33
3.2 ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ 33
3.3 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 34
3.3.1 ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ 34
3.3.2 ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 35
3.3.3 ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 35
3.3.4 ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ 36
3.3.5 ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ 38
3.3.6 ԱՂՄՈՒԿԻ և ԹՐԹՌՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ 39
4. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ 44
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ ..... **Ошибка! Закладка не определена.**
ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ 48
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 46
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 47

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձեռնարկողի մասին տեղեկություն

1.2 Ձեռնարկող՝	**<<ՀԱԷԿ-ի շինարարություն>> ՓԲԸ**
1.3 Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝	Ք.Երևան, Սուրբ Գրիգոր Լուսավորչի փողոց 17/31
1.4 Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝	Ք.Երևան, Սուրբ Գրիգոր Լուսավորչի փողոց 17/31
1.5 Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝	Արմավիրի մարզ Մեծամոր համայնք

1.1 Հապավումներ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամ ընկերություն

ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.2 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Բազմաբնակարան շենքը նախատեսվում է կառուցել Արմավիրի մարզ, Մեծամոր համայնքի 2-րդ թաղամաս 1/2 հասցեում:

Գործունեության նպատակն է կառուցել ժամանակակից տեխնոլոգիական լուծումներով հագեցած բնակելի համալիր:

ՀՕ-110-Ն օրենքը խմբ. 03.05.2023թ. ՀՕ-150-Ն "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Բազմաբնակարան շենքի նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է նախատեսվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները, բնապահպանական ազդեցության գնահատման շրջանակը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Իրավական հիմքերը

Նախատեսվող գործունեության կազմակերպումն իրականացվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության (օրենքների և ենթաօրենսդրական ակտերի) այն պահանջներով, որոնք առնչվում են շրջակա միջավայրի պահպանության և մասնավորապես նախատեսվող գործունեության կարգավորման հետ: Դրանցից հիմնականներն են՝

1. ՀՀ Հողային օրենսգիրք (02.5.2001թ.),
2. ՀՀ Ջրային օրենսգիրք (04.6.2002թ.),
3. <<Թափոնների մասին>> ՀՀ օրենք (24.11.2004 թ.),
4. <<Վարչական իրավախախտումների մասին>> ՀՀ օրենք (07.02.2012թ.),
5. <<Մթնոլորտային օդի պահպանության մասին>> ՀՀ օրենք (01.11.1994թ.),
6. <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենք ՀՕ-110-Ն օրենքը խմբ. 03.05.2023թ,
7. <<Բնապահպանական վերահսկողության մասին>> ՀՀ օրենք (11.04.2005թ),
8. << Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենք (30.05.2001թ),
9. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման “Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում” N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին”
10. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 25 հունվարի 2010թ. N 01-Ն հրաման “Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին”
11. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 17 մայիսի 2006 թվականի N 533-Ն հրաման “Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին”
12. ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N 121-Ն որոշում,
13. ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին» N 430-Ն հրաման:
14. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.),
15. «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.),
16. «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.),
17. ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության29.01.2010թ.-ի N71-Ն որոշում,

18. ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում,

19. ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967- Ն որոշում,

20. ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ա որոշում:

21. «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը հատատելու մասին» ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշումը։

22. ՀՀ կառավարության 02.12.2017թ.-ի թիվ 1404 որոշում:

23. ՀՀ քաղաքաշինության նախարարի հրամանը ՀՀՇՆ 22-04-2014 <<Պաշտպանություն աղմուկից>> Շինարարական նորմերն հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին։

24. Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N108-Ն որոշումը։

1.3 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.3.1 Նախատեսվող գործունեության նկարագիր

ՀՀ ՄԱՐԶ ԱՐՄԱՎԻՐ, ՀԱՄԱՅՆՔ ՄԵԾԱՄՈՐ ՄԵԾԱՄՈՐ Ք. 2-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ 1/2 ՀՈՂԱՄԱՍ ՀԱՍՑԵՈՒՄ ԲԱԶՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ԲՆԱԿԵԼԻ ՀԱՄԱԼԻՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ՝ 2857.87 ՔՄ: ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ ԵՆ ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ՝ «ՀԱԷԿ-Ի ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ ՏՐՎԱԾ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ԵՎ ՄԵԾԱՄՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՏՐՎԱԾ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ (N ՆԹ-3454-25): ՆԱԽԱԳԾՎՈՂ ԲԱԶՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԼԻՐԸ ԲԱՂԿԱՑԱԾ Է 4 ՄԱՍՆԱՇԵՆՔԻՑ: ՀԱՄԱԼԻՐՆ ՈՒՆԻ 1 ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻ՝ 44 ՄԵՔԵՆԱՅԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՏԵՂՈՎ: ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԵՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ, ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԵՐ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍԵՆՅԱԿՆԵՐ, ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑ՝ ԲԱԽ-ԵՐԻ ՀԱՄԱՐ: ՀԱՄԱԼԻՐՈՒՄ ԱՌԿԱ ԵՆ ՆԱԵՎ ԲԱՑՕԴՅԱ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԵՐ՝ 26 ՄԵՔԵՆԱՅԻ ՀԱՄԱՐ: ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ՀԱՐԿԻ ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆԸ 3.90մ է: ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԸ ԲԱՂԿԱՑԱԾ Է 4 ՇՔԱՄՈՒՏՔԵՐԻՑ: ՀԱՄԱԼԻՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ Է ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ, ԻՍԿ 2-ՐԴ ՀԱՐԿԻՑ ՎԵՐԵՎ՝ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐ: ԱՌԱՋԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՐԿԻ ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆԸ 3.90մ է, 2-16 ԲՆԱԿԵԼԻ ՀԱՐԿԵՐԻ ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ 3.30մ: A, B, C ՄԱՍՆԱՇԵՆՔԵՐԻՑ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐՈՒՄ՝ ՀԱՐԿՈՒՄ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ 6 է, D ՄԱՍՆԱՇԵՆՔՈՒՄ՝ 13: ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՆԱԿԸ 405 է: ԳԵՏՆԱԽԱՐՍԽԻ ՀԱՏՎԱԾԸ ԵՐԵՍՊԱՏՎԱԾ Է ԲԱԶԱԼՏԵ ՍԱԼԵՐՈՎ, ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ՀԱՐԿԻ ԴՐՍԻՑ ԵՐԵՎԱՑՈՂ ՀԱՏՎԱԾՆԵՐԸ, ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿՆ ԵՐԵՍՊԱՏՎԱԾ ԵՆ ԿԱՐՄԻՐ ՏՈՒՖՈՎ, ՃԱԿԱՏՆԵՐԸ ԼՐԻՎ ԴԵԿՈՐԱՏԻՎ ՍՎԱՂՈՎ ԵՆ ՊԱՏՎԱԾ, ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԵՆ ՍՊԻՏԱԿ ԵՎ ԲԱՑ ՄԱՆՈՒՇԱԿԱԳՈՒՅՆ ԵՐԱՆԳԻ ՆԵՐԿԵՐ:

ՏԱՆԻՔՆԵՐԸ ՀԱՐԹ ԵՆ, ԲԱՅՑ ՈՉ ՇԱՀԱԳՈՐԾՎՈՂ, ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՁՐԱՀԵՌԱՑՈՒՄ: ՀԱՄԱԼԻՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ Է ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ՖՈՒՏԲՈԼԻ ԴԱՇՏ, ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿ ԵՎ ԿԱՆԱՉԱՊԱՏ ՏԱՐԱԾՔՆԵՐ: ՆԱԵՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ Է ԲԱՐԵԿԱՐԳԵԼ ՀԱՄԱԼԻՐԻ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՅԳԻՆ 3700 ՔՄ:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՆԱԽԱԳԾՎԱԾ Է 1 ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻ, ԸՆԴՀԱՆՈՒՐ 3230.48 ՔՄ, ՈՐՆ ՈՒՆԻ ԵՐԿԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ, ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՍՆ ԴԵՊՔՈՒՄ, ԿԱՐՈՂ Է ԾԱՌԱՅԵԼ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ՈՐՊԵՍ ՊԱՀՊԱՆԱԳՈՒՅՆ ԹԱՔՍՏՈՑ: ԱՍՏԻՃԱՆԱՎԱՆԴԱԿՆԵՐԻ ԴՌՆԵՐԸ ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ԵՆ ԵՎ ԻՆՔՆԱՓԱԿՎՈՂ: ՀԱՄԱԼԻՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ Է ՏԵՂԱՎՈՐԵԼ 1010 ԲՆԱԿԻՉ: ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ՀԱՐԿՆ ԱՊԱՀՈՎՎԱԾ Է ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑՆԵՐՈՎ (ՆԱԵՎ ԱՌԿԱ ԵՆ ԲԱԽ-ՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՐՄԱՐԵՑՎԱԾ ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑՆԵՐ), ՕԴԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԹԱՐԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՎ:

ՀԱՄԱԼԻՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ Է ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ՖՈՒՏԲՈԼԻ ԴԱՇՏ, ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿ ԵՎ ԿԱՆԱՉԱՊԱՏ ՏԱՐԱԾՔՆԵՐ:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերի պահանջների նախատեսվել են թեքահարթակներ:Նախագիծը համապատասխանում է ՀՀ օրենսդրության և նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի պահանջներին:

ՏԵԽՆԻԿԱ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ՝

Հողի ընդհանուր մակերես՝ 8565.80 քմ;
Շինության ընդհանուր մակերես 36609.72 քմ;
Կառուցապատման մակերես – 2880.98 քմ -33,63 %;
Կանաչապատման մակերես՝ 3429.88 քմ – 40.04 %;
Ճանապարհ, մայթ, – 2254,94 քմ – 26.33 %;
Ստորգետնյա հարկի կառուցապատման մակերես - 3230.48 քմ,
Ավտոկայանատեղերի քանակ – 44 հատ;
Բնակարանների քանակ – 405 հատ:
Համալիրի 0 նիշը 857.6-ն է , նշված նիշից համալիրի ընդհանուր բարձրությունը 57,6մ:

Ա մասնաշենք՝կառուցապատման մակերես՝ 908.79 մ^2
12 հարկ, 1 ստորգետնյա հարկ,
2 բնակելի վերելակ, 1 բնակելի սանդղավանդակ
Առաջին հարկը՝ հասարակական, մնացած 11 հարկերը՝ բնակելի,
Յուր. բնակելի հարկում՝ 6 բնակարան, ընդհանուր՝ 66 բն.

Բ մասնաշենք՝կառուցապատման մակերես՝ 479.54 մ^2
12 հարկ, 1 ստորգետնյա հարկ
2 բնակելի վերելակ, 1 բնակելի սանդղավանդակ և 1 սանդղավանդակ՝ բակից ստորգետնյա տեխնիկական տարածք մուտքի համար
Առաջին հարկը՝ հասարակական, մնացած 11 հարկերը՝ բնակելի,
Յուր. բնակելի հարկում՝ 6 բնակարան, ընդհանուր՝ 66 բն.

Գ մասնաշենք՝կառուցապատման մակերես՝ 427.06 մ^2
14 հարկ, 1 ստորգետնյա հարկ,
2 բնակելի վերելակ, 1 բնակելի սանդղավանդակ,
Առաջին հարկը՝ հասարակական, մնացած 13 հարկերը՝ բնակելի,
Յուր. բնակելի հարկում՝ 6 բնակարան, ընդհանուր՝ 78 բն.

Դ մասնաշենք՝կառուցապատման մակերես՝ 1065.59 մ^2
16 հարկ, 1 ստորգետնյա հարկ,
2 բնակելի վերելակ, 2 բնակելի սանդղավանդակ,
Առաջին հարկը՝ հասարակական, մնացած 15 հարկերը՝ բնակելի,
Յուր. բնակելի հարկում՝ 13 բնակարան, ընդհանուր՝ 195 բն.

- Հողամասի նպատակային նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակավայրերի;
- գործառնական նշանակությունը՝ Բնակելի կառուցապատման:
- գրանցված իրավունքի տեսակը՝ Ընդհանուր համատեղ սեփականություն:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է համաձայն կանաչապատման նախագծի: Տարածքում կիրականացվի սիզամարգի ցանքս կտկվեն ծառեր և թփեր:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում:

Շինության օդափոխությունը նախատեսված է բնական՝ օդատարերով, որոնք բարձրանում են տանիք:

Օդատարերի վրա յուրաքանչյուր հարկի առաստաղի տակ նախատեսված է կարգավորիչ ճաղավանդակ:

Շինարարական մոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակացույց

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է համաձայն (N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում կետ 111, 113) ՍՆԻՊ 1.04.03-85* մաս II, հետ և հիման վրա հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը: Օբյեկտի ընդհանուր կոմպլեքսի շինարարության նորմատիվ տևողությունը ծրագրվում է 1800 օր շինարարական աշխատանքների կատարման համար թույլատրման տրամադրման օրվանից:

1.3.2 Նախատեսվող աշխատանքների կազմակերպում

Ելնելով առկա պայմաններից շինարարությունը բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շինմոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Բոլոր տիպի շինմոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից:

Շինհրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից տրված հրահանգներով:

Շինհրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ զերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից և վտանգավոր արտանետումներից;Հետիոտների անվտանգությունը ապահովելու նպատակով շինհրապարակը անհրաժեշտ է ցանկապատել թիթեղով:

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում:

1.3.3 Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ

Շինարարությունը ենթադրվում է իրականացնել կապալային եղանակով: Գլխավոր կապալառու կազմակերպությունը որոշվելու է մրցույթով:

Մասնաշենքերի միացումը արտաքին ինժեներական ցանցերին կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Շենքերի, ավտոճանապարհների, հրապարակների և մայթերի կառուցումը կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունը կարելի է իրականացնել ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և

մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, վարձակալել դրանք այլ կազմակերպություններից:

Ժամանակավոր շինությունների, վերամբարձ կռունկի, պահեստավորման մակերեսների տեղակայումը պատկերված է շինարարական գլխավոր հատակագծի վրա:

Առաջարկվում է հնարավորինս օգտագործել գույքային շարժական շինություններ:

Ժամանակավոր շինությունների ցանկը և դրանց տեղակայումը ցանկալի է լրացուցիչ ճշտվեն տեղում և համաձայնեցվեն պատվիրատուի հետ:

1.3.4 Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռանարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շաղախը և բետոնը կառաքվեն Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով՝ մատակարարումը կկազմակերպվի բացառելով բետոնաջրերի արտահոսքը և բետոնաջրերով աղտոտումը շրջակա միջավայր:

Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքների անընդհատությունը:

Առաջարկվում է շինարարության նյութատեխնիկական մատակարարման հետևյալ սխեման.

- Առանձին ամրանային ձողերը և հիմնակմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով բերվում են անմիջականորեն շինարարական հրապարակ, որտեղ կատարվում է դրանց պահեստավորում և տեղադրում,
- Բետոնային խառնուրդը միաձույլ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների համար, ինչպես նաև շաղախը շարվածքի համար առաքվում են անմիջապես շինհրապարակ ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով,
- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումը իրականացվելու է շինհրապարակից դուրս մասնագիտացված

կետերում: Այն տեխնիկական միջոցները որոնք հնարավոր չէ մոտեցնել սպասարկման կետեր, կսպասարկվեն շինարարական հրապարակում մասնագիտացված կազմակերպությունների կողմից: Տարածքում քսայուղեր և վառելանյութ չի պահեստավորվելու :

Շինարարությունը կիրականացվի մասնագիտացված կազմակերպության կողմից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1. Աշխատանքների բնույթից ելնելով՝ բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:
2. Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի, աշխատանքների ընդհանրացված փուլի« կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:
3. Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների« աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ« կոշիկ)« համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան
2. Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:
3. Աշխատանքի պաշտպանությանª անվտանգության տեխնիկայի« արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:
4. Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման, հրահանգման ժամանակին և որակով անցկացման« անհատական պաշտպանական միջոցների վիճակի և

կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:


ՏԱՐԱԾՔԻ ՍՈՒՏՔ
ԲԱԿԱՅԻՆ ՏԱՆՍՊԱՐԿ
ՏԵՍՔ 1-1
ՑԻՆԿԱՊԱՏ ՊՈՊՏ ԹԻՆԵՐԻ
ԺՅՍՍՍ ՊՈՂՊԱՏԵ ԿՈՌՈՒՎԱԾ
2200
1000
ՀԱԿԱՅՐՈՂԵՏԱՅԻՆ ԳՈՒՅՔ
ՇԻՆԴՐՊՊԱՐԱԿԻ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ՇԻՆԱԾԵՆԱՆԵՐԻ ՄՈՒՏՔԻ ԿԵՏ
POTAIN MC205 ՄԱԿԱՐԴԻ ԱՇՏԱՐԱԿԱՅԻՆ ԿՈՌՈՒՆԳ
5000
6594
50
45
10000
ՇԻՆԴՐՊՊԱՐԱԿԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՑԱՆԿԱՊԱՏ (ՏԵՍՔ 1-1)
POTAIN MC205 ՄԱԿԱՐԴԻ ԱՇՏԱՐԱԿԱՅԻՆ ԿՈՌՈՒՆԳ
POTAIN MC205 ՄԱԿԱՐԴԻ ԱՇՏԱՐԱԿԱՅԻՆ ԿՈՌՈՒՆԳ
ՇԻՆԴՐՊՊԱՐԱԿԻ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱԿԱՅՐՈՂԵՏԱՅԻՆ ԳՈՒՅՔ
ՍԱՐՔԱՅԻՆ ԻՐԵՐԻ ԴԱՏՐՈՒՍԱՆ ԵՎԱՔԱՐԱՆ
ՀԱԿԱՅՐՈՂԵՏԱՅԻՆ ՎԱՀԱՆ
ՇԻՆԴՐՊՊԱՐԱԿԻ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ՇԻՆԴՐՊՊԱՐԱԿԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՑԱՆԿԱՊԱՏ (ՏԵՍՔ 1-1)
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԱԿ ՏԵՍՔ 2-2
ՓԱԿ ՊՈՂԵՏ
ՀԱԿԱՅՐՈՂԵՏԱՅԻՆ ԳՈՒՅՔ
ՇԻՆԴՐՊՊԱՐԱԿԻ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
HARUTYUNYAN ARCHITECTS
ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՍՏՈՒԴԻԱ՝
DESIGN STUDIO:
«ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՔԻՏԵԿՏՍ» ՍՊԸ
ՀՀ, Երևան 0033
«HARUTYUNYA ARCHITECTS» LLC
Armenia Yerevan 0033
ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՀԱՄԱՐ՝
LICENSE NUMBER:
ՃԲՊ - Ա - 0148
ՔԱՐՏԵԶ՝
MAP:
A
B
C
D
ՆԱԽԱԳԾԻ ԱՆՎԱՆՈՒՄ՝
PROJECT TITLE:
ԲԱԶՄԱՖԱՄԻԼԱՅԻՆ ԲԱՅԱԿԵԼԻ ՀԱՄԱԼՍԻՐԻ ՆԱԽԱԳԻԾ
ՆԱԽԱԳԾԻ ՀԱՍՑԵ՝
PROJECT ADDRESS:
ՀՀ ՍՄՊԸ ԱՐՄԱՎԻՐ, ՀԱԼԱԲՅԱՆ ՓԵՇԱԼՍՈՒ ՓԵՇԱԼՍՈՒՆ Թ. 2-ՐԴ ՄԱՍՆԱՅԱՆ 1/2 ՀՈՂԱՄԱՍ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
CLIENT:
«ՀԱՀԿ-ի ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ
ՆԱԽԱԳԾԻ ՓՈՒԼ՝
PROJECT PHASE:
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ
ԳԾԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄ՝
DRAWING NAME:
ՇԻՆԴՐՊՊԱՐԱԿԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ
ԳԾԱԳՐԻ ՀԱՄԱՐ՝
SHEET NUMBER:
ԳԱԿ-03
ՄԱՍՇՏԱԲ՝
SCALE:
Մ 1:500
ԱՄՍԱԹԻՎ՝
DATE:
10.06.2025
ՆԱԽԱԳԾԻ ՀԱՄԱՐ՝
PROJECT NUMBER:
No_ԼՍ-95
ՏՆՕՐԵՆ՝ DIRECTOR: ԱՆՈՒՇ ԱՂԱՄԻՐԵԿՅԱՆ
ՃԱՐԱՐԱՊԵՏ՝ ARCHITECT: ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՃԱՐԱՐԱՊԵՏ՝ ARCHITECT: ԱՇՈՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՃԱՐԱՐԱՊԵՏ՝ ARCHITECT: ԹԱՐՈՆ ԿԱՉՅԱՆ
ՀԱՐԱՎԱՆԵՐ ԸՍՏ ՇԻԼԱՆՑՏԱՆՈՒՄԻ
ՇԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԵՐԸ ԱԿԱՆԿԼՈՒՄԻ ԱՌՍՊ ԱԼԱՐՈՒՄԵՏՆ Է ԿԱՇՄԵԼ ԱՇԽԱՏԱՆՔԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ (ԱԿԱ)՝
ՇԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԵՐԸ ԿԱՏԱՐԵԼ ՊԱՐՏԱԿԱՆԵՐՆԱԿԱՆԱՑՄԱՆԱՅԻՆ ՏԵՍԱԿԱՎԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ, ԸՍՏ ՀՀ-IV-2008-Ի ՆՈՐՄԵՐԻՆԵՐԻ,
ՇԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԵՐԸ ԿԱՏԱՐԵԼ ԸՍՏ ԵՆԹԱԿԱՅԻՆ ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿԻ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ
ՇԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԵՐԸ ԿԱՏԱՐԵԼ ՊԱՐՏԱԿԱՆԵՐԻՆ, ՆՈՐՈՒՄԸ, ԿԱՆՈՆՆԵՐԸ, ՍՏԱՆԴԱՐՏԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ԵՎ ԱՆԽԱՎԱՏԻ ՏԵՍԱԿԱՎԱՆ ՊԱՏԱՍԽԱՆ
ՇԻՆ ԳՈՐԾԱՐԱՎԱԾ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻՆ ՊԵՏՔԱԿԱՆԱՑՎԵԼ ՀԱՎԱՔԱԳՐԵՑԻՆ ՊԱՏԵՏՄԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻՆ, ՊԱՅՄԱՆՍԱՍԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՐՈՒՄ Է ՇԻԼԱՐՄՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆԸՆԴՈՒՆԵՐԻ ԿԱՄ ԱՐԱՆՑ ՄԻՋԱՄՈՒՏՔԻ ՍԱՀՄԱՆԸ:
ԱՇՏԱՐԱԿԱՅԻՆ ԿՈՌՈՒՆԻ ՄՈՆՏԱԺՈՒՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԱՍԻՆ ՊԱՏԱՍԽԱՆՎՈՒՄ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԱՏՈՒՑԱԳԻՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻՆ ԿԱՄՈՒՄԻ
ՇԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԵՐԸ ԱԿՍԵԼ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՇԻՆ ՀՈՒՐՏԱՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՎՈՒՄ ԳԵՏՆ:
ԱՍՓԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԵԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆԱՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ՏԵՍ ԲԱՑԱՏՐԱԿԻՐ)
ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ՝
ՍԵՂԱԿԱԼՈՒ ԲԱԼԱՐԻՆ ԾԱՎԱԼԸ V=12600 մ³
ՀԵՏԵԼԻԱՅԻ ԾԱՎԱԼԸ՝ V=1500 մ³
ԱՌԱՋԱՏԱՅԻՆ ՇԻՆ ՄԻՋԻՆ ԾԱՎԱԼԸ V=34.5 ՏՍ
ԿԵՂԱՐԿԱՅԻՆ ՄԻՋԻՆ ԾԱՎԱԼԸ 2.95Տ
ՏԵՍՔ 2-2
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԱԿ
ԿԱՌՈՒՑՈՒՄՆԵՐ
ՊԼԱՆ ԿԱՊԱԼԱՆՈՒՄ
ՊՈՂՈՒՄԱՅԻՆ ԳԾԻՐ
ՏԵՍԱԿԱՎԱՆ ԳԾԻՐ
ՕՐԱԿ
ՇԻՆ. ՊՈՒՏԵՏԻՆԵՐ
ՊԱՅՄԱՆԱՆԻՇ ՆՇՈՒՄՆԵՐ
1. ԳՈՒՅՔԱՅԻՆ ՌԻՍԿԱՅԻՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԱԳԻԾ
2. ԱՎՈՐՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԱԿՈՒՄ
3. ԿԱՌՈՒՑՎՈՂ ԲԱՐՁՐԱԳԱՆԳ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ
3. ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՑԱՆԿԱՊԱՏ
4. ԼՈՒՍԱՎՈՐԱԿ
5. ՇԱՐԺԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ
6. ՇԱՐԺԱԿԱՆ ԱԼԼԱԿԱՆԱՊԱՏ
7. ՀԱԿԱՅՐՈՂԵՏԱՅԻՆ ՎԱՀԱՆ
8. ԾԱԼՈՒՑՏԱԼԻ ՎԱՀԱՆ
1. ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ԼՈՒՍԱՅԻՆ ՀԱՐԿԱԿ
2. ԱԼՅԱՆՑԵՏ (ՇԱՐԺԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ)
3. ՀԱՄԼՈՒՐԱԶԱՓԱՐԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ)
4. ՃՏԵՐԱԼ (ՇԱՐԺԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ)
5. ՊԱՏԵԼԻՍ (ՇԱՐԺԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ)
6. ԱՇԽԱՏԱՍԵՂԱԿԱ(ՇԱՐԺԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ)
7. ՇԱՐԺԱԿԱՆ ԱԼԼԱԿԱՆԱՊԱՏ
8. ՇԻՆՏԵՍԱԼԻԱՅԻ ԵՎ ԲԵՌՆԱՏԱՐԵՐԻ ԿԱՅԱՆԱՏԵՂԻ
9. ԵՎԱԼԵՌՈՒՅԹ ԲԱՑՈՒՄ ՊԱՏԵԼԻՍ
10. ԱԶՈՒԼԻՆ ԿԵՆՏԱԼ, ՇՈՒԼԱԼ, ՊԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՊՏԱՌՈՒՄԱՆ
11. ԲԱՑԱՌՈՒՅՑ ՀԱՎԱՔԱՍԻՆ ՏԱՐԱԾՔ
Акти
Чтобы
"Пара

1.3.5 Կադրային ապահովում և շինտեխնիկա

Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը՝ 60 մարդ, որից

Ինժիներատեխնիկական անձնակազմ - 8 մարդ

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա:

Աղյուսակ 1	Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ		
NN	Անվանում	Մակնիշ	Քանակ
1	Էքսկավատոր	KOMATSU PC 400-7	2
2	Բուլդոզեր	KOMATSU D37-EX-22	1
3	Շարժական կոմպրեսոր	ЗИФ-55В	1
4	վերամբարձ ավտոկռունկ	Галичанин КС-65713-1	1
5	Աշտարակային կռունկ	Liebherr 132 EC - H8	1
6	Տոփանիչ	CR 3/60	2
7	Գույքային կաղապարամած	կոմպլ.	1
8	Թրթրիչ մակերեսային էլեկտրական	ИВ-91А	1
9	Թրթրիչ խորքային էլեկտրական	ИВ-102А	2
10	Փոխարկիչ թրթրիչների համար	ИВ-4	3
11	Եռակցման տրանսֆորմատոր	СТН-500	2
12	Դակիչ ձեռքի էլեկտրական	ИЭ-4709А	3
13	Ձեռքի էլեկտրական դուր	ИЭ-1208Э	3
14	Հղկող մեքենա	ИЭ-2201	3
15	Թրթրազլդոն	HAMI 3410	1
16	Ավտոբետոնախառնիչ	СБ-69Б	հաշվարկով
17	Ավտոբետոնատար	КрАЗ-65055	հաշվարկով
18	Ինքնաթափ ավտոմոբիլ	МАЗ-5550	հաշվարկով

1.3.6 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ եւ այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ եւ կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր եւ այլն: Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի եւ ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաեւ շինարարական անձնակազմի խմելու եւ կենցաղային նպատակների համար:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, կենցաղային աղբն է 25.2 տոննա և շինարարական աղբն է 120 տոննա: Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից:

a) **Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝**

$W_{խ.տ.}$= **(n x N + n_1 x N_1) x T,** որտեղ

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 8 մարդ

N– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 $մ^3$օր/մարդ

n_1– սպասարկող աշխատոների թվաքանակն է՝ 52 մարդ

N_1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 խմ.օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 1800 օր

$W_{խ.տ.}$= (8 x 0.016 + 52 x 0.025) x 1800 = 2570.4 խմ/շին. ժամ.:

b) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$Մ_1$ = S_1 x K_1 x T x D որտեղ՝

S_1 – ջրվող տարածքի մակերեսը, 2500 քմ (միաժամանակ ամենամեծ շինարարական մակերեսը);

K_1 – 1 քմ ջրցանի նորմը, 0.0005 խմ;

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, շին. ընթացքում;

D – ջրցանի քանակը օրվա ընթացքում 2;

$Մ_1$ = 4500 x 0.0005 x 2500 x 2 = 11250 խմ/շին. ժամ.:

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 13820,4 խմ/շին. ժամ:

Բնակելի շենքերի հիմնական ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի միանալով <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ ցանցին, ջրամատակարարումը կիրականացվի տարածքից 1550մ հեռավորությամբ անցնող D=300մմ ջրագծից, ժամանակավոր ջրամատակարարումը տարածքից մոտ 210 մ հեռավորությամբ գտնվող ջրատարից, ջրահեռացումը 430մ հեռավորությամբ անցնող D=400մմ կոյուղատարին:

Շինարարության փուլում ջրցանման համար անհրաժեշտ ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:

Գազամատակարարումը համաձայն տեխնիկական պայմանի 1550խմ առավելագույն ծախսով հնարավոր կլինի իրականացնել Մեծամորի ԳԲԿ միջին ճնշման գազատարից:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը 4513 կՎԱ դրվածքային հզորությամբ հնարավոր կլինի իրականացնել Մեծամոր 110/35/10 կՎ ենթակայանի 10կՎ ԲՍ-ի առաջին հատոն և Մեծամոր 110/35/10 կՎ ենթակայանի բջիջ 14-ից սնվող Միկրոշրջան 10 կվ ուղղության S 6781 ենթակայանի 10 կՎ ԲՍ:

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ

2.1 ՖԻԶԻԿԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Մեծամորը քաղաքը գտնվում է Հայաստանի Արմավիրի մարզում, Էջմիածին քաղաքից 8 կմ հյուսիս-արևելք: Տարածքը գտնվում է Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի 2-րդ թաղամասի 1/2 հասցեում, հողամասը իրենից ներկայացնում է չկառուցապատված տարածք: Նախատեսվող շենքերից 10մ և ավել հեռավորության վրա գտնվում են բնակելի, հասարակական, գյուղատնտեսական հողեր, 90մ հեռավորության վրա մանկապարտեզ, 115 մ հեռավորության վրա դպրոց: 110 Կվա հոսանքի հաղորդալարից պահպանված է ոչ պակաս քան 20մ հեռավորություն՝ 21,3մ: Ճանապարհից հեռավորությունը կազմում է 54,5մ:

Գործունեության իրականացման տեղանքին հարակից չկան արգելոցներ, ազգային պարկեր կամ հատուկ նշանակության պահպանվող տարածքներ, ինչպես նաև բնութագրվող տարածքում և տարածքի մերձակայքում չկան ազդեցության ենթակա պատմամշակութային հուշարձաններ, քանի որ գործունեության ենթակա տարածքը գտնվում է կառուցապատված միջավայրում:

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը գտնվում է Եղվարդի հրաբխային սարահարթի սահմաններում:

Երկրաբանական կառուցվածքը ներկայացված է չորրորդական հասակի նստվածքներով դելյուվիալ-պրոլյուվիալ և հրաբխային առաջացումներով:

Հետազոտվող տարածքը ներկայացված է վերին չորրորդական հասակի հրաբխային ապարներով՝ բազալտներով, հրաբխային խարամով, որոնք ծածկվում են էլյուվիալ, դելյուվիալ-պրոլյուվիալ առաջացումներով:

Ջրաերկրաբանական պայմանները Ուսումնասիրվող տարածքում գրունտային ջրերը գտնվում են 13,2-ից 14,5 մետր խորություններում: Շինարարական տեղամասի հիդրոերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարության համար:

Ֆիզիկաերկրաբանական

Վտանգավոր ֆիզիկաերկրաբանական երևույթները, որոնք կարող են ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում նախագծվող կառույցի վրա նորմալ կենսագործնեության վրա բացակայում են:

Համաձայն իրականացված ուսումնասիրությունների տվյալների ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են չորրորդական ժամանակաշրջանի, հրաբխային առաջացումները՝ բազալտները, հրաբխային խարամ որոնց ծածկում են էլյուվիալ-դելյուվիալ առաջացումները՝ կավավազները, խիճ, մանրախիճը, ավազային լցոնով:

Տեղամասի երկրաբանական կտրվածքը ներկայացված է գրունտների հետևյալ տարատեսակներով՝ վերևից-ներքև

Շերտ-1 Կավավազներ - սպիտակավուն, դեղնավուն երանգով, խճի, մանրախճի մեծաքարերի հետ 40-45% : Շերտի հզորությունը հասնում է մինչև 5,0 մետր:

Ժամանակակից դելյուվիալ-պրոլյուվիալ առաջացումներ են: Չունի համատարած տարածում:

Շերտ-2 Խիճ, մանրախիճ, ավազային լցոնով: միջին խտացվածության: Չունի համատարած տարածում: Հորատված հզորությունը տատանվում է 4,6-ից14,0 մետր է: Ժամանակակից դելյուվիալ-պրոլյուվիալ առաջացումներ են:

Շերտ-3 Հրաբխային խարամ ավազային, խճային կազմի կարմրավուն, հանդիպում են խարամացված բազալտներ: Շերտն չունի համատարած տարածում: Չորրորդական ժամանակաշրջանի, հրաբխային առաջացումներ: Շերտի բացված հզորությունը հասնում է մինչև 22,0 մետր:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի Մեծամոր քաղաքի 2-րդ թաղամասի ½ հողամասի, չկառուցապատված տարածքում:

2. Տեղամասի երկրաբանական կտրվածքը ներկայացված է գրունտների ինժեներաերկրաբանական 3 շերտերով (Էլեմենտներով), որոնց գեոտեխնիկական հատկությունների բնութագրերի ցուցանիշները բերված են աղյուսակում: Որպես հուսալի հիմնատակ կարող են ծառայել շերտ2 (խիճ, մանրախիճ, ավազային լցոնով) և շերտ 3 (հրաբխային խարամը, կարմրավուն, ավազախճային կազմի):Կավավազների շերտը անհրաժեշտ է հեռացնել:

Ֆիզիկա-մեխանիկական բնութագրերը		Գրունտի շերտերը		
		1	2	3
1. Գրունտի խտությունը, տ / մ³		1,75	1,96	1,65
2. Ծակոտկենության գործակիցը, e		0,718	0,430	0,739
3. Ներքին շփման գործակից	tgφ	-	0,650	0,600
4. Տեսակարար շաղկապվածությունը, ՄՊա	C	-	0,001	0,001
5. Դեֆորմացիայի մոդուլը E, ՄՊա		-	30,0	28,0
6. Ամրության սահմանն ըստ միառանցք սեղմման, R_s, ՄՊա		-	-	-
7.Պայմանական հաշվարկային ճնշումը, R, ՄՊա		-	0,3	0,28
8.Ներքնակի գործակիցը, կգ/սմ³		-	3,0	2,0
9. Կարգն ըստ սեյսմիկ հատկությունների		IV	II	II

2.Նախագծային նիշի սահմաններում, անհամասեռ հիմնատակ ունենալու դեպքում մի մասը ներկայացված խիճ, մանրախիճ, ավազային լցոնով, մյուս հատվածը հրաբխային խարամով, առաջարկվում է նախագծային նիշի սահմաններից ներքև 3,0-4,0մետր հաստությամբ շերտը հեռացնել, որից հետո խճա-մանրախճային գրունտով կատարել հետլիցք, տոփանելով խտացվածությունը հասցնել ρ/ρ_{max}>0,95 Այնուհետև կիրառել երկաթբետոնյա սալ:

3. Գրունտի սառեցման առավելագույն խորությունը, համաձայն ՀՇՆ II-7.01.2011 նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 0,65մետր:

Активация Windows
Чтобы активировать Windo
"Параметры"



4. Շինության ստորգետնյա մասերը հնարավոր մակերևույթային ջրային հոսքից պաշտպանելու նպատակով նպատակահարմար է իրականացնել ստորգետնյա մասերի ջրամեկուսացում:

5. ՀՀՇՆ 2020 համաձայն Մեծամոր քաղաքի տարածքը գտնվում է սեյսմիկ առաջին սեյսմիկ գոտում (a=0.3g), տեղամասի գրունտային պայմաններն ըստ սեյսմիկ հատկությունների գնահատվում են որպես II կարգի, որին համապատասխանում 0.3g (K_0=1.0) գրունտի հորիզոնական արագացման առավելագույն արժեքը

a_{max}=0.30g

Ինժեներ-երկրաբան
Երկ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր Ս. Հ. Հայրոյան

Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է ՀՀ Արմավիրի մարզի ք. Մեծամոր, 2րդ թաղամաս 2/1 հասցեում գտնվող հողատարածքի սահմաններում: Գործունեության տարածքը, ինչպես նաև հարակից շրջանները ներառված չեն բնության հատուկ պահպանվող տարածքներում: Բնության հատուկ պահպանվող տարածքներից մարզում է գտնվում <<Որդան կարմիր>> պետական արգելավայրը, որը Հայաստանի Հանրապետության 24 արգելավայրերից մեկն է: Այն կազմավորվել է 1987 թ. ՀՀ Արմավիրի մարզում ունի 215.85 հա տարածք և չունի որևէ առնչություն նախատեսվող գործունեության տարածքի հետ, քանի որ տեղակայված է Արարատյան դաշտում, Արգավանդ, Արազափ և Ալաշկերտ գյուղերի միջև, ծովի մակարդակից 900950 մ բարձրության վրա: <<Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 2008 թ օգոստոսի 14ի 967 որոշման համաձայն գործունեության տարածքում և դրան հարակից տարածքներում բացակայում են երկրաբանական, ջրաերկրաբանական, ջրագրական, բնապատկման և կենսաբանական հուշարձանները: Նախատեսվող գործունեության տարածքում բացակայում են նաև պատմամշակութային արժեք ներկայացնող կառույցները կամ հուշարձանները, ինչը երևում է նաև <<Հայաստանի Հանրապետության պետական

սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 385ն որոշումից (15 մարտ 2007 թ.), որում Արմավիր մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում ներառված հուշարձանները որևէ առնչություն չունեն նախատեսվող գործունեության տարածքի հետ:

2.2 ԿԼԻՄԱՆ

Կլիմայական բնութագրի համար հիմք է ծառայել ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը և համապատասխան կլիմայական ցուցանիշները:

Կլիմայի և օդային ավազանի մասին տեղեկատվական ցուցանիշները վերցված են Ծրագրի համար հայցվող տարածքին ամենամոտը գտնվող «Արմավիր» օդերևութաբանական դիտակետից:

Ջերմաստիճանի բացարձակ նվազագույնը – 31.4°C, բացարձակ մաքսիմումը հասնում է +41.5 °C: Տարեկան տեղումների քանակը 260մմ: Օդի հարաբերական միջին տարեկան խոնավությունը 60: Տեղումների տարեկան միջին քանակը 254մմ:

Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը

Օդերևութաբ. կայանը	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C°												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Հրազդան	-4.1	-1.3	5.4	12.5	17.4	21.9	25.8	25.3	20.2	13.0	5.7	-0,8	11.8	-31.4	41,5

Օդի հարաբերական խոնավություն

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը. %														
	ըստ ամիսների												Միջին տարեկան	միջինը ժամը 15-ին	
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII		Ամենա-ցուրտ ամսվա	Ամենաշոգ ամսվա
Արմավիր	75	70	62	56	56	50	46	47	51	61	70	76	60	60	30

Մթնոլորտային տեղումներ

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական մմ օրական առավելագույնը												
	ըստ ամիսների												Տարեկան
	I	II	III	IV	V	VI	VII	VII I	IX	X	X I	XII	
Արմավիր	18	18	23	33	43	24	13	9	11	25	20	17	254
	19	21	26	30	47	21	38	31	35	30	28	20	47

Ձյան Ծածկույթ

Բնակավայրի անվանումը	**Ձյան ծածկույթը**			
	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	**Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը**	**Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ**	**Գրունտի սառչման առավելագույն խորությունը**
1	**2**	**3**	**4**	**5**
Արմավիր	42	38	92	70

Քամի

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Ամիսներ	Կրկնելիությունը, % ըստ ուղղությունների Միջին արագությունը, մ/վ								Անհարմարությունների կրկնելիությունը,%	Միջին ամսական առաջացումը,մ/վ	Միջին տարեկան արագությունը,մ/վ	Ուժեղ քամիներով (15մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ "n" տարիների ընթացքում		
			Հյուսի սային (Հս)	Հյուսիս- Արև վեյան (ՀսԱրլ)	Արև վեյա ն (Արլ)	Հարավ- Արև վեյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավ- Արև մոյան (ՀվԱրմ)	Արև մոյան (Արմ)	Հյուսիս- Արև մոյան (ՀսԱրմ)					20	50	100
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Արմավիր	917,1	Հունվար	7	5	17	8	9	8	28	18	77	0.5	0,9	15	24	26	27
			2,2	2,2	1,9	1,9	1,8	2,3	2,5	2,8							
		Ապրիլ	5	7	28	11	9	9	20	11	52	1,3					
			2,8	3,4	2,5	2,7	2,7	3,7	3,0	3,7							
		Հուլիս	3	8	31	16	11	7	16	8	55	1,1					
			2,1	2,5	1,9	2,2	1,1	2,6	2,7	2,6							
		հոկտեմ-բեր	5	4	23	16	9	7	22	14	72	0,6					
			2,2	2,8	1,9	2,9	2,8	3,6	3,1	3,8							

2.3 Օդային ավազան

Մթնոլորտային օդի որակի մոնիթորինգը կատարվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Հաշվի առնելով այն, որ Մեծամոր համայնքում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումները բացակայում են, սույն հայտում բերվում են օդային ավազանի ֆոնային կոնցենտրացիաների հաշվկենսաբարկային արժեքները:

ՀՀ բնակավայրերի՝ որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները, վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաների արժեքները ներկայացված են «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կայքում (http://meteomonitoring.am/page/1591) ըստ տվյալ բնակավայրի ազգաբնակչության թվաքանակի:

ՀՀ բնակավայրերի ազգաբնակչության թվաքանակը ընդունված է համարել ՀՀ-ի ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) 2011 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ վիճակագրական տեղեկագրում բերված տվյալները: Համաձայն ՀՀ ԱՎԾ վիճակագրական տեղեկագրի՝ Մեծամոր համայնքում բնակչության թվաքանակը կազմել է9000 մարդ:

Ելնելով նշված թվաքանակից և ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքներից, Մեծամոր համայնքում աղտոտիչների ֆոնային կոնցենտրացիաների արժեքները գնահատվում են հետևյալ տիրույթում. Փոշու մասնիկներ՝ 0,071 մգ/խմ, ածխածնի մոնօքսիդ՝ 0,8 մգ/խմ, ազոտի երկօքսիդ՝ 0,023 մգ/խմ և ծծմբի երկօքսիդ՝ 0,006 մգ/խմ:

2.4 Ջրային ռեսուրսներ

«Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշմամբ ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

ՀՀ Արմավիրի մարզն առանձնապես հարուստ չէ ջրային ռեսուրսներով: Մեծամոր քաղաքը գտնվում է Ախուրյան ջրավազանային կառավարման տարածքում:

Ախուրյանի ՋԿՏ-ը ներառում է Ախուրյանի և Մեծամորի գետավազանները: Այստեղ ջրային ռեսուրսների աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում կոմունալ կենցաղային կեղտաջրերը: 2024 թվականին Ախուրյանի ՋԿՏ ում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է 11 դիտակետում, որոնցից 18%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս, 36%-ում՝ 3-րդ դաս և 46%-ում՝ 5-րդ դաս:

Նախորդ տարվա համեմատ 2024 թվականին Մեծամոր գետի՝ Ռանչպար գյուղից վերև դիտակետում ջրի որակը 4-րդ դասից դարձել է 3-րդ դաս:

Գործունեության և հարակից տարածքներում մակերևութային ջրերը բացակայում են:

Նախատեսվող գործունեությունը ջրային ավազանի աղտոտվածությունը չի ավելացնի, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումներ հնարավոր ազդեցությունների նվազեցմանն ուղղված:

2.5 Հողերի նկարագիրը

Հողերը

Արմավիրի մարզի լանդշաֆտը ցածրադիր մասերում կիսաանապատային է, նախալեռնային շրջաններում՝ խայտաբղետ, կավաբեր, տեղ-տեղ աղակալված հողերը, կան նաև անապատային տեղամասեր: Արաքսի և նրա վտակների փուխր բերվածքներում ձևավորվել են հումուսով աղքատ գորշ հողեր՝ բաց գորշագույն հողեր ու տիպիկ գորշահողեր՝ աղակալած տարածքներով, ցածրադիր ողողատներում՝ գերխոնավ հողերն ու ճահճուտները: Լճային նստվածքների հզորությունը հասնում է մի

քանի տասնյակ մետրի: Անապատի համար բնորոշ այս հողերի առաջացմանը նպաստել են կլիմայի չորությունը և բուսական ծածկույթի աղքատությունը: Բնորոշ են նաև բաց գորշագույն և գորշագույն հողերը, որոնք հիմնականում ոռոգվում են գյուղատնտեսական նպատակով: Այս գոտու լանդշաֆտների մեծ մասը վերափոխվել են ջերմասեր կուլտուրաների ագրոլանդշաֆտների: Արարատյան հարթավայրի արևմտյան մասում հանդիպում են աղակալած հողեր՝ ալկալահողերը: Տեղ-տեղ երևում են թաքիրներ՝ դեղնասպիտակավուն կավի ճաքճքած մակերեսով տարածություններ: Չոր ցամաքային կլիմայի պայմաններում գերակշռում են ֆիզիկական հողմնահարման պրոցեսները՝ պայմանավորելով քայքայված փուխր նյութերի կուտակումը և կենսանյութի արագ հանքայնացումը:

2.6 Հիմնային աշխատանքներ

Նախատեսվող գործունեության նախագիծը ենթադրում է նաև հիմքերի փորման աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 12000 խմ ընդհանուր ծավալով փորման աշխատանքեր հանվող 2600 խմ ծավալով զանգվածը կտեղափոխվի Մեծամոր համայնքի հետ համաձայնեցված վայր, մնացած մասը՝ կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք:

2.7 Բուսական և կենդանական աշխարհ

Բուսական աշխարհ:

Նախատեսվող գործունեության տարածքը պատկանում է Երևանի ֆլորիստիկ շրջանին, որին բնորոշ են կիսաանապատային և անապատային բուսածածկույթը և հանդիպող սակավ բուսատեսակները հիմնականում քսերոֆիտներ (չորասերներ) են: Որպես կանոն այս տեսակները տարածված են ոչ աղակալված, մակերեսային քարքարոտ գորշ հողերի վրա և ներկայացված են օշինդրաէֆեմերային-կիսաանապատային և հալոֆիլակապանային տիպերով:
Տարածաշրջանում գրանցված բուսատեսակներից դոմինանտ հովվափողազգիներից (Alismataceae)՝ հովվափող լանցետային (Alisma lanceolatum), սովորական նետախոտը (Sagittaria sagittifolia L.), եռատերև նետախոտը (Sagittaria trifolia L.), հովանոցազգիներից՝ ակտոնոլեմ խոշորաբաժակը (Actinolemia macrolema), աննշմարակող անհարթապտուղը (Aphanopleura trachisperma), երնջակ Վանատուրի (Eringium vanaturii), աստղածաղիկազգիներից՝ վարդատերեփուկ մուշկայինը (Amberboa_moschata), խոզանափուշ բարակը (Caucinia tenella), կանգար տուրնեֆորի(Gundelia tournefortii), կաթնուկ Թախտանի (Lactuca takhtadzhianii), խաչածաղկավորներից՝ լրջուն թռչնակտուց (Isatis ornitorhynchus), ցախակեռասազգիներից՝ կտտենի, թանթրվենի Տիգրանի (Sambucus - tigranii), մեխակազգիներից՝ փշատերևուկ ծակող (Acanthophyllum pungens), ալոխրուլա բունգեի (Allochrusa bungei), մեխակ Լիբանանի (Dianthus libanotis), թելուկազգիներից՝ բիեներցիա շուրջաթև (Bienertia cycloptera), օշան Թամամջյանի (Salsola tamamschjanae), սպանախ քառաեզ (Spinacia tetrandra), լոբազգիներից՝ գազ տարօրինակ (Astragalus paradoxus), հացիամեմ գլխիկավոր (Trigonella capitata), ֆրանկենազգիներից՝ ֆրանկենի փոշապատ (Frankenia pulverulenta), բորակաթուփայգիներից՝ բորակաթուփ շոբերի (Nitraria schoberi), հացազգիներից՝ այծակն հաստ (Aegilops crassa), ցորեն արարատյան (Tritiucum araraicum), կարմրանազգիներից՝ վաիմիա (rinkws լոց տետրադիվլիս կարմրան ութառեզանի (Tamarix octandra), զուգատերևազգիներից Tapakerpal" բարալիկ (Tetradiclis tanella) և այլն:

Կենդանական աշխարհ: Արմավիրի մարզի տարածքում տարածված են ցածր բարձրության (մինչև 1000 մ ծովի մակերևույթից բարձր) հարթավայրերին բնորոշ կենդանական աշխարհի ներկայացուցիչներ: Շրջանում կենդանական աշխարհը ներկայացված է գերազանցապես անապատային և կիսաանապատային լանդշաֆտներին բնորոշ տեսակներով: Երկկենցաղներից հանդիպում է լճային գորտը, սիրիական սխտորագորտը, կանաչ դոդոշը, մողեսներից՝ կլորագլխիկը, օձագլխիկը և երկարառտ սցինկը, օձերից՝ կույր օձուկը, ռնգեղջյուր օձը: Բազմազան են թռչունները և միջատները: Թիթեռներից բնորոշ են սատիրները, խոշոր առագաստաթիթեռները: Սակայն այստեղ հանդիպում են նաև արտազոնալ բնակավայրերին (քարաթափներ, ցանքեր, այգիներ, բնակավայրեր) բնորոշ տեսակներ: Կաթնասունները առավել կերպով ներկայացված են կրծողներով, որոնց մի մասը վարում է ստորգետնյա կենսակերպ: Թռչունները նեկայացված են բաց տարածքներին բնորոշ տեսակներով: Սողունները և երկենցաղները փոքրաքանակ են: Գարնան և Աշնան սեզոններին այստեղ հանդիպում են չվերացող տեսակներ: Մարզի տարածքի դոմինանտ և բնորոշ տեսակներից կարելի է նշել Հայաստանում ամենուրեք տարածված Crocidura (սպիտակատամիկ) Vulpes vulpes

L. (աղվես) Cricetus auratus Nat. (գերմանամուկ), Mucrotus arvalis Pall. (դաշտամուկ) Perdix perdix L. (Կաքավ) Grus grus L. (Կռունկ) և այլն:

Արմավիրի մարզի տարածքում հանդիպում են ՀՀ բույսերի կենդանիների Կարմիր գրքում գրանցված հետևյալ տեսակները.

Մեհելիի պայտաքիթ չղջիկ (Rhinolophus mehelyi Matschie)՝ տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) <<Vulnerable Л4e>> կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես <<Խոցելի>> B1a+2ab(iii):

Գանգրափետուր հավալուսն (Pelecanus crispus Bruch) – հազվագյուտ, կրճատվող թվաքանակով տեսակ է: Գրանցված է նախքին թվաքանակով տեսակ է: Գրանցված է նախկին ԽՍՀՄ Կարմիր գրքերում: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3. 1) <<Vulnerable A2ce+3ce+4ce>> կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես <<Վտանգված>> EN D:

Սպիտակաճակատ սագ (Anser albirons (Scopoli, 1769)) – չվող, բնադրող, ձմեռող, քիչ տարածված, հազվագյուտ տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver 3.1) <<Least Concern>> կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է, որպես <<Խոցելի>> VU B1ab(iii)+2ab(ii):

Խոզանափուշ բարալիկ (լատ.' Cousinia tenella), բարդածաղկավորների ընտանիքին պատկանող ծածկասերմ բույս:

Կալախոտ կասպիական (Kalidium caspicum (L.) Ungern-Sternb.) – վտանգված տեսակ է: Հայտնի է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանից: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. Կմից պակաս է, բնակչության շրջանի մակերեսը' 500 քառ. կմից պակաս: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում' աղուտների շարունակվող յուրացման հետևանքով: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ծրագրի իրականացման բուն տարածքը տեղակայված է ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի 2դդ թաղամաս 2/1 հասցեում: Տեղանքը գտնվում է զարգացած քաղաքային միջավայրում, ինչը փաստում է, որ նախատեսվող գործունեության տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը: Նախատեսվող գործունեության տարածքում չկան էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված որևէ բուսատեսակ և կենդանատեսակ, բացակայում են նաև միգրացիոն ուղիները' տարածքի ուրբանացված լինելու պատճառով: Տարածքը զուրկ է բուսականությունից' բացառությամբ տեղտեղ ինքմաբերաբար աճող ոչ արժեքավոր

բուսականությունից: Բոլոր աշխատանքները նախատեսվում է իրականացնել վերոնշյալ հողատարածքի սահմաններում:

2.8 Թափոնների կառավարում

Մեծամոր համայնքի տարածքում աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր:

Շինարարական աշխատանքերի ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ/բացառությամբ խոշոր եզրաչափերի /ծածկագիրը՝ 9120040001004/՝ 25.2 տոննա, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, և 120 տոննա շենքերի քանդումից առաջացած շինարարական աղբը /ծածկագիրը՝ 9120060101004/, ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների հետ համաձայնեցված վայր:

Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող (ծածկագիրը՝ 31401100 08 99 5) 2600 խմ ծավալով, կտեղափոխվի համայնքի հետ համաձայնեցված վայր:

3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետական նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարական հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շինարարական հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

3.1 ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

3.2 ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ (CO, NOx):

3.3 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

3.3.1 ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս;
- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով;
- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով;
- շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով,
- շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը լվանալ,
- հողման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ,
- ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով:
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորում:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմաններ (քամի անհողմություն,անոմալ բարձր շոգ կամ ցուրտ եղանակ, թանձր մառախուխ, ամպրոպ) իհայտ գալու դեպքում՝ ըստ իրավիճակի, կիրառվում են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի քանակի և հաճախականության ավելացում,
- աշխատանքի տևողության կրճատում,
- կրճատվում է միաժամանակ աշխատող մեքենաների և մեխանիզմների քանակությունը,
- փոշեգոյացման հետ կապված աշխատանքների ծավալների նվազեցում,

3.3.2 ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 100 խմ ծավալով տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 2000քմ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

3.3.3 ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական գործընացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավվի ժամանակակից տեխնիկակակն միջոցներ:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի:

- Զրոյական նիշում նախատեսվող կանաչապատ մակերեսը կազմում է 3429.88քմ:

  Համաձայն նախնական էսքիզի տարածքում նախատեսվում է տնկել (օրենքով սահմանված փորձաքննությունները անցնելուց հետո կանաչապատման նախագիծը կներկայացվի Մեծամոր համայնքի համաձայնեցմանը) Թխկի մանրատերև "Կորալիում" - 4հատ, Թխկի սրատերև - 6հատ, Թխկի կարմիր -4հատ, Մայրի ատլանտյան "կապույտ" - 2հատ, Հուդայածառ – 8հատ, Գիհի չինական – 22հատ, Գիհի չինական "ոսկեգույն" – 12հատ, Գիհի կազակական - 24հատ , Քնարածառ վարդակակաչանման - 22հատ, Մագնոլիա սուլանժի - 16հատ, Եղևնի կապույտ - 3հատ, Սոճի մուգո - 4հատ, Սոճի սև - 4հատ, Սոսի արևելյան - 10հատ, Բալենի ճապոնական - 1հատ, Վարդ շտամբ - 8հատ, սիզամարգ 3200 քմ:

- Ներքին ոռոգման ցանցը նախատեսցում է կաթիլային:

- Նախատեսվող կանաչապատման աշխատանքերի համար կօգտագործվի տարածքում առկա բուսահողը, որի ծավալը կազմում է մոտ 350 խմ: Կանաչապատ տարածքների ոռոգումը իրականացվելու է համայնքի ոռոգման ցանցից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շինարարության ժամկետը սահմանված է շինարարության տրամադրումից հետո 60 ամիս, նշված հարցը կհստակեցվի մոտ 4 տարի հետո:

3.3.4 ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:

- հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է հրշեջ հիդրանտի տեղադրում):
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղ-արկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Շինարարական աշխատանքների ժամանակ՝

ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
- բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:
- Նախատեսվող հասարակական համալիրում առկա վտանգավոր օբյեկտները «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով կներկայացվեն տեխնիկական անվտանգության փորձաքննությունների;

- Անվտանգության նկատառումներից ելնելով շին.հրապարակում կտեղադրվեն կողմնակի անձանց մուտքը արգելող նշաններ, և շինհրապարակը կապահովվի լուսավորությամբ:
- իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում ղեկավարվել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

Ըստ նախնական գնահատման, ապահովելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների և առողջապահական ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

3.3.5 ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ

Բուսականության պահպանում և կառավարում

- Անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել կառուցապատման տարածքի հարևանությամբ գտնվող ազդեցության ենթարկված բուսականության ջրցանման միջոցառումներ՝ բուսականության վրա նստած փոշին հեռացնելու նպատակով:
- Անհրաժեշտ է ապահովել տարածքում առկա բուսականության (եթե առկա են) ոռոգման միջոցառումները շինարարության ընթացքում:
- Անհրաժեշտ է բացառել տարածքում (եթե առկա են) այն ծառերի և թփերի հատումը, որոնք նախագծի համաձայն ազդեցության չեն ենթարկվում:

Կենդանական աշխարհի պահպանության միջոցառումներ

Ամենամեծ ազդեցությունը կարտահայտվի հողային աշխատանքների ժամանակ դրանց բների ոչնչացմամբ: Սակայն կենդանիները այդ դեպքում առանց մեծ կորուստների կկց տարածքներում կգտնեն նոր բների և բնակավայրերի հնարավորություններ:

Կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով ամենաինտենսիվ շինարարական աշխատանքները կիրականացվեն ձվադրման և բնադրման ժամանակաշրջանից (ապրիլ-մայիս) դուրս:

Ընդհանուր առմամբ, շինարարական աշխատանքները կկրեն լոկալ և ժամանակավոր բնույթ, ինչի շնորհիվ կենդանիներին հասցվող վնասը կլինի նվազագույն: Շինարարական աշխատանքների բնույթը և մասշտաբը այնպիսին են, որ նրանք իրենց փոքրաձավալության պատճառով չեն կարող արգելել կենդանական աշխարհի ներկայացուցիչների սեզոնային միգրացիայի կամ ջուր խմելու ճանապարհները:

3.3.6 ԱՂՄՈՒԿԻ և ԹՐԹՌՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 80 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն): Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում: Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը, աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ: Շինարարության ընթացքում շին հրապարակում աշխատելու են տարբեր մեքենաներ և մեխանիզմներ, որոնց աղմուկի մակարդակի գումարային ազդեցությունը հնարավոր է գերազանցի սահմանված նորմերը: Սակայն դա լինելու է ոչ անընդմեջ, ժամանակավոր: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցերեկային ժամերին: Աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով հայտում նախատեսվում են համապատասխան բնապահպանական միջոցառումներ, որոնց կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ

սահմանված նորմերը: Շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին, - կառուցապատման տարածքում ձայնակլանիչ նյութերի և կոնստրուկցիաների կիրառում,

- շինարարական աշխատանքներում ներգրավվելու են ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ,

- տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործել սարքին վիճակում,

- պարբերաբար կստուգվեն և կկարգաբերվեն տրանսպորտային միջոցների շարժիչները,

- բացառել շինարարության ընթացքում օգտագործվող մեքենաների կայանումը բնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ,

- օգտագործվող շին տեխնիկան և մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով,

- պահպանել աղմուկի, վիբրացիայի, արտանետվող գազերի թույլատրելի նորմերը, կատարել չափագրում,

- շինհրապարակում աղմուկի մակարդակը գերազանցելու դեպքում աշխատողներին ապահովել ականջակալներով: Շահագործման փուլում բնակելի շենքում նախատեսվում է.

- օդափոխման և օդի լավորակման համակարգերում աղմուկի խլացուցիչների կիրառում,

- օգտագործվող ձայնամեկուսիչ, ձայնակլանիչ, թրթռամարիչ նյութերի օգտագործում՝ առաջնորդվելով համապատասխան մարմինների եզրակացություններով:

Աղմուկից պաշտպանվող օբյեկտ են հանդիսանում հարակից բնակելի շենքերը, որոնց պատերը, երկշերտ պատուհանները արդեն իսկ կրում են աղմուկի մեկուսիչի դեր:

Աղմուկի հիմնական աղբյուր են հանդիսանում շինարարության ընթացքում աշխատանքների իրականացնելիս շինարարական տեխնիկայի աշխատանքը: Հաշվարկը առված է ենթադրելով, որ բոլոր շին.տեխնիկան շահագործվում է միաժամանակ՝ աղմուկի առավելագույն արժեքը հաշվարկելու համար: Աղմուկի մակարդակի հաշվարկը կատարվել է համաձայն ՀՀՇՆ22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» շինարարական նորմերի:

Հաշվարկները կատարված են հետևյալ բանաձևով՝

$$L = L_w + 10 \cdot \lg \left(\frac{\chi \Phi}{\Omega r^2} + \frac{4}{kB} \right)$$

Ելակետային տվյալներ

Շինարարության հրապարակի կազմակերպման աշխատանքների փուլ

- Վերամբարձ ավտոկռունկ՝ 102 դԲ:

Հողային աշխատանքների փուլ

- Բուդոզեր՝ 97 դԲ:
- Էքսկովատոր Hyundai՝ 99 դԲ:

Շինմոնտաժային աշծատանքների փուլ

- Ավտոբետոնախառնիչ՝ 96 դԲ:
- Վերամբարձ կռունկ՝ 100 դԲ (առկա կռունկների հետ համեմատելի):
- Բեռնատար ավտոբետոնախառնիչ՝ 98 դԲ:
- Բեռնատար ինքնաթափ՝ 95 դԲ:
- Շարժական կոմպրեսոր՝ 92 դԲ:
- Էլ.եռակցման սարք՝ 90 դԲ:

Հեռավորություն (r)՝ 50 մետր

Հաշվարկի համար անհրաժեշտ գործակիցներ

- **χ = 1** (մոտ դաշտի ազդեցության գործակից)
- **Φ = 1** (աղմուկի ուղղվածության գործոն՝ համաչափ ճառագայթման համար)
- **Ω = 2π** (կիսագունդային ճառագայթման տարածություն բացօթյա տարածքի համար)
- **k = 1** (ձայնային դաշտի հավասարաչափ բաշխման խախտման գործակից)
- **B = 200** (սենյակի ձայնագիտական հաստատունը՝ մ²)

Յուրաքանչյուր սարքավորման աղմուկի մակարդակը հետևյալն է՝

- Բուդոզեր՝ $97+10\cdot\log_{10}(0.02006366)= 78.02$ դԲ:
- Էքսկովատոր՝ $99+10\cdot\log_{10}(0.02006366)= 78.02$ դԲ:
- Վերամբարձ ավտոկռունկ -10՝ $102+10\cdot\log_{10}(0.02006366)=85.02$դԲ:
- Ավտոբետոնախառնիչ՝ 96 դԲ$+10\cdot\log_{10}(0.02006366)=79.02$դԲ:
- Վերամբարձ կռունկ՝ $100+10\cdot\log_{10}(0.02006366)=83.02$դԲ:
- Բեռնատար ավտոբետոնախառնիչ՝ $98+10\cdot\log_{10}(0.02006366)=81.02$դԲ:
- Բեռնատար ինքնաթափ՝ $95+10\cdot\log_{10}(0.02006366)= 78.02$ դԲ:
- Շարժական կոմպրեսոր՝ $92+10\cdot\log_{10}(0.02006366)= 78.02$ դԲ:
- Էլ.եռակցման սարք՝ $90+10\cdot\log_{10}(0.02006366)= 78.02$ դԲ:

Աղմուկի մակարդակների համատեղումը հետևյալն է՝

Երբ մի քանի աղմուկի աղբյուրներ կան, դրանք համադրում ենք հետևյալ բանաձևով՝

$LA_{էկվ}$ = 10 * log_{10}(10^{78.02/10} + 10^{78.02/10}+ 10^{85.02/10}+ 10^{79.02/10}+ 10^{83.02/10}+ 10^{81.02/10}+ 10^{3*78.02/10}) = 10 * log10 (1.047·10^9) = 90.18 դԲ

Այսպիսով, շինարարական հրապարակում հողային աշխատանքների ժամանակ երկու էքսկավատոր և մեկ կռունկ միաժամանակ աշխատանելու դեպքում համակցված աղմուկի մակարդակը 50 մետր հեռավորության վրա կազմում է 90.18 դԲ:

Շինհրապարակը լինելու է ցանկապատված: Ցանկապատի նյութի խտությունը 7850 կգ/մ^3: Շինության պատերը հանդիսանում են միաժամանակ նաև աղմուկից պաշտպանման էկրան:

Պաշտպանիչ էկրանի արդյունավետությունը հաշվարկում են հետևալ բանաձևով.

$L_{աղ}$ = 23*lg*$m_{է}$ - 10 դԲ, երբ m ≥ 200 կգ/մ^3

$L_{աղ}$ = 13*lg*$m_{է}$ - 13 դԲ, երբ m ≤ 200 կգ/մ^3

Որտեղ $m_{է}$ = K*m - մակերեսի խտության էկվիվալենտն է,

m - մակերեսի խտությունն է, կգ/մ^3,

K - գործակից է, որի հաշվի է առնում մետաղական պատնեշի խտությունը, որը 7850 կգ/մ^3

$m_{է}$ = 7850 * 1=7850

$L_{աղ}$= 23*lg*$m_{է}$ - 13 = 23*lg(7850) – 13 = 23*3.894 – 10 = 89.562−10 = 79.56 դԲ

Շինարարական հրապարակից դուրս աղմուկի մակարդակը կազմում է՝

$LA_{տար}$ = $LA_{էկվ}$ – $L_{աղ}$ = 90.18 – 79.56 = 10.62 դԲ

Մոտակա բնակելի շինությունների ներսում աղմուկի մակարդակը կկազմի 10.62 դԲ, ինչը նորմայից բավականին ցածր է:

Աշխատանքները իրականցվելու են միայն ցերեկային ժամերին:

Թրթռում

Թրթռման նորմաները բնակելի շենքերում ըստ ՀՀ առողջապանության նախարարի 17 մայիսի 2006թ. N533-Ն որոշման, ներկայացված են ներքոնշյալ աղյուսակում:

Հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) թույլատրելի մակարդակները

Միջին երկրաչափական հաճախականության օկտավային շերտեր, Հց	Թույլատրելի արժեքները XO YO և ZO առանցքներով			
	Թրթռման արագացում		Թրթռման արագություն	
	մ/վրկ2 .10-3	դԲ	մ/վ .10-3	դԲ
2	10.0	80	0.79	84
4	11.0	81	0.45	79
8	14.0	83	0.28	75

16 31.5 63	28.0 56.0 110.0	89 95 101	0.28 0.28 0.28	75 75 75
Ճշգրտված ու համարժեքային ճշգրտված արժեքները և դրանց մակարդակները	10	80	0.28	75
Ոչ մշտական թրթռման (վիբրացիայի) համար թույլատրելի արժեքներին մտցվում է ուղղում - 10դԲ, իսկ բացարձակ արժեքները բազմապատկվում են 0,32-ով: Դպրոցների սենքերի, ուսումնական հաստատությունների, գրադարանների ընթերցասրահների համար մտցվում է ուղղում -3դԲ:				

Շինարարության ընթացքում թրթռման աղբյուր են հանդիսանում շինտեխնիկայի աշխատաքը, որոնց թրթռման մակարդակը ցածր է, և արդեն իսկ շինհրապարակի սահմաններում ալիքը մարում է և չի կարող ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա:

4. Շրջակա միջավայրի վրա ազդեցության մշտադիտարկման (մոնիտորինգի) ծրագիր

Հասարակական համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ;
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ;
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
5. Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների,
6. Հարակից տարածքներում կենսաբազմազանության մոնիթորինգ:
7. Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար:
8. Հարակից տարածքներում կեղսաբազմազանության մոնիթորինգ 3 ամիս մեկ հաճախականությամբ:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարաության ընթացքում հատկացնել 4000000 դրամ:

Մշտադիտարկում և բնապահպանական միջոցառումներ, շին. փուլ/ դրամ		
Տարածքի ջրցան փոշեգոյացումը կանխելու նպատակով	400000	400000
Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;	60x45000	2700000
Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:	20x35000	700000
Կենսաբազմազանության մոնիթորինգ	20x15000	300000
Ամբողջ շինարարության համար		4000000

Բնապահպանական կառավարման պլան

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախազգուշացումներ և աշխատողների անվտանգություն	(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ (b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել (c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա: (d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) (e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	(a) - օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս; (b) - ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով; (c) - ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով; (d) - շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով, (e) - շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը լվանալ, (f) - հողման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ, (g) - ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով: (h) - պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորում:

	Աղմուկ	(i) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում (j) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն:
	Թափոնների կառավարում	(a) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: (b) Շինարարակամ աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից (c) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն
Կեղտաջրերի հեռացում	Ջրի որակ	(a) Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով ավտոցիստեռներով: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:, (b) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն նախատեսված տարածքներում, որտեղից ջրի արտահոսք չի լինի: (c) Շինհրապարակից ելքի ժամանակ լվացվում են տեխնիկական միջոցների անվադողերը: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:
Հետիոտների և երթևեկության ապահովություն	Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ	(a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով. ▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ ▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության զոնայում: ▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին: ▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուդարձի համար. ▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային

		շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում:
Արտակարգ իրավիճակների կառավարում	Շինարարական աշխատանքների հետևանքով արտակարգ իրավիճակների կառավարում	- Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում; - Շինարարական բոլոր տեղամասերում անհրաժեշտ է ապահովել արտակարգ պատահարների դեպքում կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը; - Շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, հրշեջ հիդրանտներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն: - Մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար: - Հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում՝ ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ - Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագություն, անհողմություն, մառախուղ) դեպքում աշխատանքներն իրականացնել պահպանելով անվտանգության բոլոր կանոնները կամ շին. աշխատանքները դադարեցնել մինչ օդերևութաբանական պայմանները կլինեն բարենպաստ աշխատանքները վերսկսելու համար:
Կենսաբազմազանություն	Ծառաթփային բուսականության վրա ազդեցություն	Առաջնորդվել «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը հատատելու մասին» ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշման դրույթներով: - Բուսականության պահպանում և կառավարում Անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել ազդեցության ենթարկված բուսականության ջրցանման միջոցառումներ՝ բուսականության վրա նստած փոշին հեռացնելու նպատակով, - Անհրաժեշտ է ապահովել տարածքում առկա բուսականության (եթե առկա են) ոռոգման միջոցառումները շինարարության ընթացքում: - վայրի բուսատեսակների և դրանց պոպուլյացիաների վիճակի ուսումնասիրության (տեսակային կազմ, տարածվածություն, քանակ) իրականացում, որի տվյալները սահմանված կարգով տրամադրվում են բուսական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում լիազորված պետական մարմնին. - բուսատեսակների այլ աճելավայրեր ապօրինի տեղափոխման և այդ տարածքում այլ տեսակների կլիմայավարժեցման կանխարգելում. - կենսաբանական տեխնոլոգիաների միջոցով ստացված կենդանի ձևափոխված օրգանիզմների ապօրինի օգտագործման և օտարածին տեսակների ներմուծման կանխարգելում. - Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ արգելված թունաքիմիկատների օգտագործման

		կանխարգելում: Հողերում Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում (այսուհետ՝ կարմիր գիրք) գրանցված տվյալ բուսական տեսակի նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով 1) առանձնացնում են օգտագործման նպատակով տրամադրված տարածքում պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ սույն կետում նշված նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով. 2) ժամանակավորապես սահմանափակում են առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը. 3) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված միջոցառումների իրականացման անհնարինության դեպքում կարմիր գրքում, որպես տվյալ բույսի աճելավայր չգրանցված տարածքներից, բույսերի բնական վերարտադրության նպատակով տեղափոխում են տնտեսական գործունեության արդյունքում ոչնչացման սպառնալիքի տակ գտնվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայրեր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրում են համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը՝ գենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով:
	Կենդանական աշխարհի վրա ազդեցություն	- Կենդանական աշխարհի պահպանում և կառավարում - Հողային կամ շինարարական աշխատանքների ժամանակ հայտնաբերված կենդանական աշխարհի բնադրավայրերի և/կամ միգրացիոն ուղիների դեպքերը գրանցվեն, տեղեկատվությունը տրամադրվի պատասխանատու մարմիններին, որոշումներ կայացվեն դրանց պահպանմանը կամ փոփոխմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու

Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	- Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում	- Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	- Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու
Հողային աշխատանքներ	- Հանված հողերը հեռացվում են համայնքի կողմից հատկացված վայր	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	Կապալառու
Ներտ շինանյութերի գնում	- Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից	Ներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում	Մատակարարման ընթացքում	Կապալառու, մատակարար
Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ	Շինհրապարակ	Արտաքին զննում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, քաղաքապե-տարանի վերահսկողու թյուն
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու

	անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն				
Կանաչապատում	Տեղանքին բնորոշ ծառաթփային բուսականության տնկում	Սեփական տարածք	Արտաքին զննում	մշտական	Կապալառու
Կենսաբազմազանություն	Սեփական տարածքի և շինհրապարակի հարակից տարածքի ազդեցության ենթարկված բուսականության ուսումնասիրում	Հարակից տարածք	Արտաքին զննում	Եռամսյակ	Կապալառու

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
2. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
3. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохранных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ